գդակը բոլորովին կորցրել էր իր մազերը: Էլ ինչո՞վ պէտք էր բացատրել այդ խնայող եւ աշխատաւոր մարդու դառն աղքատութեան պատճառները:

Լինում էր, շատ անգամ տանը հաց չունէինք ուտելու, քոյրերս լաց էին լինում սովից: Եւ ահա՛, գիշերային տարաժամ պահուն յայտնւում էին հարկապահանջները: Սկսում էին դուռը զարկել: Կը կոտրէին, եթէ իսկոյն չբաց անէինք: Ներս էին թափւում մի խումբ կատաղի ֆերրաշներ: Բոլորովին դժոխք էր դառնամ այն ժամանակ մեր տունը: Ամէնքս սարսափում էինք: Հայրս մեռելի գոյն էր ստանում, իսկ մայրս երկիւղից սկսում էր դողալ: Ես եւ քոյրերս փախչում էինք ու մտնում մեր քնաշորերի մէջ, թէեւ երբեք քնել կարող չէինք, բայց սուս էինք կենում:

Ֆերրաշները հօրս բռնում էին ու կապում մեր խրճիթի սան վրայ, այնքան պինդ, որ շարժոել կարող չէր, կարծես ամբողջ մարմնով մեխած լինէր սան հետ: Նրա մօտ դիզւում էր մի ահագին խուրձ դալար ճիպոտների՝ սկսում էին ծեծել հօրս: Նա մորմոքում էր, աղաղակում էր, աղաչանք էր անում — բայց ո՞վ էր նրա ձայնը լսողը...

Ֆերրաշները հարկ էին պահանջում: Եւ եթէ մի փոքր ուշանում էր, սկսում էին հօրս մերկ ոտների տակ կրակ լցնել, այդ բաւական չէր, նրա մարմինը այրում էին տաքացրած շամփուրներով: Այդ սոսկալի տանջանքների ժամանակ ինչ որ իմ մօր դրութիւնն էր, աստոա՛ծ ազատէ, ես անկարող եմ նկարագրել: Նա բոլորովին գժւում էր, նա կտրում էր իր գլխի եւ պարանոցի զարդերից ամենաթանկագինը եւ տալիս ֆերրաշներին: Նա աղաչում էր, պաղատում էր, որ չծեծեն հօրս, որ չսպանեն նրան, որ սպասեն մինչեւ առաւօտ, մինչեւ լոյսը ծագի, որ հայրս կարողանայ մի տեղից պարտք անել եւ պահանջած հարկը վճարել:

Այս րոպէիս էլ իմ մարմնի վրայ դող է ընկնում, երբ մտաբերում եմ այն սարսափելի գիշերները... Ֆերրաշները գալիս էին միշտ գիշերով, ինչպէս չար երեխաները միշտ գիշերային մթութեան ժամանակն են քանդում խեղճ ծտի բոյնը, եւ գիշերով են բռնում նրան, որովհետեւ գիտեն, որ ողորմելի թռչունը այն ժամանակ մի ուրիշ պատսպարան չունի, բացի իր օթեւանը:

Զարհուրելի գիշերներ... Որքա՜ն արտասուքի եւ որքա՜ն տանջանքների պատճառ էին դառնում նրանք մորս... Նա գիշերային այն մթին խաւարի մէջ, մենակ դուրս էր գալիս տունից, առնում էր իր հետ մի պղինձ կամ մի ուրիշ բան, եւ տանում էր գինետուն, որ գրաւ դնէ եւ նրանց համար ըմպելիքներ բերէ: Նա մորթում էր մեր հաւերը եւ նրանց համար կերակուրներ էր պատրաստում, բայց անողորմ հիւրերի ուտելուն եւ խմելուն չափ չկար: